ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հունիսի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Կարինե Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը վերացնելու պահանջի մասին, թիվ ՎԴ/3465/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2023 թվականի մայիսի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Կարինե Հարությունյանը 2023 թվականի մայիսի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը վերացնելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 29-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունիսի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 77-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, 22-րդ հոդվածի 3-րդ մասին, 23-րդ հոդվածի 7-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Հ]իմնադրամը սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ հետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, իսկ իրավաբանական անձինք հանդիսանում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներ, իսկ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան»-ը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրված հիմնադրամ՝ իրավաբանական անձ:*

Վերոգրյալի հիման վրա և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ ուսումնասիրելով հայցադիմումը և կից

ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 09.03.2023 թվականի թիվ 115-Ա հրամանը՝ Դատարանն արձանագրում է, որ, թեև, նշված հրամանն ընդունվել է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից, սակայն դրանով ծագած իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, այլ ուղղված է եղել մասնավոր իրավահարաբերության ծագմանը, այն է՝ դրանով նշանակվել է իրավաբանական անձ հանդիսացող «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ 3 անդամներից կազմված ժամանակավոր խորհուրդ, այսինքն՝ նշված որոշմամբ ծագած իրահարաբերությունները հանդիսանում են մասնավոր իրավահարաբերություններ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը փաստում է, որ վերոնշյալ հրամանն ընդունած մարմինը, թեև, հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, սակայն վիճարկվող հրամանով ծագած իրավահարաբերությունը չի համապատասխանում հանրային իրավահարաբերությունների հատկանիշներին՝ բովանդակության և օբյեկտի առումներով:

Դատարանը փաստում է նաև, որ սույն վեճը հանդիսանում է քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերությունների շրջանակում ծագած, ուստի հայցն ընդդատյա չէ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի քննությանը, որպիսի հանգամանքը, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի ուժով, հիմք է հանդիսանում հայցադիմումն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու համար»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հիմնադրմանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 15-րդ հոդվածի 5-րդ մասին, 23-րդ հոդվածի 7-րդ մասին, 35-րդ հոդվածի 15-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-4:

գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի մայիսի 29-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) [Դ]ատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից կամ դրա մասնակցությամբ իրավաբանական անձի, այդ թվում՝ հիմնադրամի, հիմնադրման, ինչպես նաև դրա մարմինների միջոցով գործունեության իրականացման դեպքում պետությունը չի իրացնում իր իշխանական գործառույթները, այլ պարզապես պետության պարագայում առկա է յուրահատկություն, որը դրսևորվում է նրանում, որ պետությունը իր գործունեությունը կարող է իրականացնել տարբեր պետական մարմինների (որոնք վարչական իրավահարաբերություններում վարչական մարմիններ են) միջոցով:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը հարկ է համարում պարզել միայն հետևյալ իրավական հարցադրումները.

ա) արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

բ) արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ

(…):

Տվյալ պարագայում Դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան»-ը հանդիսանում է հիմնադրամ, այսինքն՝ հետապնդում է հանրօգուտ նպատակ և ՀՀ արդարադատության նախարարի 2023թ. մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանի՝ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ժամանակավոր խորհուրդ նշանակելու մասին, հիմքում «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը:

Այսինքն, հանրային իշխանության սուբյեկտ ՀՀ արդարադատության նախարարն ունեցել է օրենքով սահմանված պարտականություն և վիճարկվող հրամանը կայացնելով, կատարել է օրենքով սահմանված իր իշխանական լիազորությունն իրականացնելու պարտականությունը, այլ ոչ թե հանդես է եկել Հայաստանի Հանրապետության՝ որպես «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի հիմնադրի անունից, որը իր գործունեությունը կարող էր իրականացնել տարբեր պետական մարմինների, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության միջոցով:

Ավելին, ՀՀ արդարադատության նախարարը գործել է հանրային շահի ապահովման նպատակով, մասնավորապես՝ 2023թ. մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանն ուղղված է հանրայիին շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, այն է՝ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի, որպես հանրօգուտ նպատակ հետապնդող կազմակերպության, ընթացիկ գործունեության իրականացման ապահովմանը:

Այսպիսով, Դատարանը փաստում է, որ վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը ՀՀ արդարադատության նախարարն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, պահանջի հիմքում ընկած վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ ՀՀ արդարադատության նախարարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի՝ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ որպես հանրօգուտ նպատակ հետապնդող կազմակերպության՝ ընթացիկ գործունեության իրականացման ապահովմանը:

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ՝ հանրային իրավահարաբերություններ, հետևաբար՝ ներկայացված հայցադիմումը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից (…)»[2]:

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 55-58:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3465/05/23 գործն ըստ հայցի՝ Կարինե Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (…)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«(…) քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ) ու իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (…)»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *«Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ»:*

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ *«Հիմնադրամի կառավարման և նրա մարմինների ձևավորման կարգը սահմանվում է հիմնադիրների հաստատած կանոնադրությամբ»:*

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հիմնադրամն իրավաբանական անձ է (…)»:*

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետությունը և համայնքները կարող են լինել հիմնադրամի հիմնադիր՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով*»:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝*

1) հոգաբարձուների խորհուրդը.

2) կառավարիչը (տնօրենը, գործադիր տնօրենը կամ գլխավոր տնօրենը, ռեկտորը)»:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է*»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմավորվում է կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ եթե կանոնադրությամբ նման կարգ սահմանված չէ, ապա յուրաքանչյուր հիմնադիր հոգաբարձուների խորհրդի մեկ անդամ սկզբունքով*»:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «*Եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը երկամյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:*

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել սույն օրենքով սահմանված կարգով հոգաբարձուների խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

1) իրականացնելու հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ սույն օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորություններ.

2) դիմելու դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ հիմնադրամը լուծարելու համար»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է 2011 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ՝ *Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի* քաղաքացիական գործով՝ արձանագրելով հետևյալը. *«անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից: Հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության»*[3]:

Վերը նշված հարցին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով՝ 2016 թվականի ապրիլի 22-ին կայացված որոշմամբ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարբերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական*

[3] *Տե՛ս Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը:*

լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնապար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, ամփոփելով վերը նշված դիրքորոշումները, մեկ այլ՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ հավելել է, որ *«հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»:

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով իրավահարաբերության բնույթը պարզելու նպատակով կիրառվելիք մեխանիզմներին, *Լուսինե Սահակյանն ընդդեմ ՀՀ փաստաբանների պալատի* քաղաքացիական գործով 2022 թվականի մայիսի 13-ի որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. *«Իրավահարաբերության բնույթը պարզելու համար հարկավոր է այն դիտարկել շահերի տեսության, ենթակարգության տեսության և հատուկ իրավունքի տեսության համատեքստում:*

Ըստ շահերի տեսության՝ հանրային իրավունքը մասնավորից տարբերվում է այն շահի տեսակով, որոնք պաշպանվում են առանձին իրավանորմով: Այն իրավանորմերը, որոնք ծառայում են հանրային կամ ընդհանուր շահին, պատկանում են հանրային իրավունքին: Մինչդեռ, մասնավոր իրավանորմերը ծառայում են մասնավոր կամ անհատական շահերին:

Ենթակարգության տեսությունը ելնում է մասնակիցների հարաբերությունների բնույթից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ հարաբերության մասնակիցներն են մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից քաղաքացին: Ըստ այս տեսության՝ այն իրավանորմերը, որոնք կարգավորում են հանրային իշխանությունը կրողների գործողությունները, համարվում են հանրային-իրավական, երբ դրանք վերաբերում են

վերադասության-ենթակայության հարաբերությանը: Եթե մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն, ապա իրավահարաբերությունը հանրային է, իսկ եթե իրավունքի երկու սուբյեկտները միմյանց առջև հանդես են գալիս իրավահավասար կերպով, ապա առկա են մասնավոր-իրավական հարաբերություններ:

Հատուկ իրավունքի տեսությունն իր հերթին նույնպես կոչված է պարզելու վեճի հանրային-իրավական բնույթը: Այն ելնում է վեճը լուծող իրավանորմերի իրավական բնույթից: Ըստ այս տեսության՝ եթե վեճը լուծվում է հանրային-իրավական նորմերի միջոցով, ապա առկա է հանրային-իրավական վեճ, իսկ եթե վեճը լուծում են մասնավոր-իրավական նորմերը, ապա կունենանք մասնավոր-իրավական վեճ:

Վերոնշյալ տեսությունների հիմքում դրված չափանիշներից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին.

- որ նորմերն են լուծում վեճը,

- արդյո՞ք դրանք հանրային-իրավական նորմեր են (ինչ շահերի պաշտպանությանն են ուղղված այդ նորմերը),

- արդյո՞ք իրավահարաբերության մասնակիցների միջև առկա է վերադասության-ենթակայության հարաբերություն»:

10. Սույն որոշման 8-րդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և 9-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Այսինքն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է նաև, որ հիմնադրամը քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված ու անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է՝

իրավաբանական անձ, որը հետապնդում է օրենքով նախատեսված մի շարք հանրօգուտ նպատակներ, այդ թվում՝ կրթական և գիտական: Հիմնադրամի հիմնադիր կարող է լինել նաև Հայաստանի Հանրապետությունը: Հիմնադրամի մարմին է հանդիսանում նաև հոգաբարձուների խորհուրդը, որի միջոցով հիմնադրամն իրականացնում է իր գործունեությունը: Նշված խորհուրդը կազմավորվում է կանոնադրությամբ սահմանված կարգով, իսկ եթե կանոնադրությամբ նման կարգ սահմանված չէ, ապա յուրաքանչյուր հիմնադիր հոգաբարձուների խորհրդի մեկ անդամ սկզբունքով: Ընդ որում, հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում, եթե երկամյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա երկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Կարինե Հարությունյանը 2023 թվականի մայիսի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը վերացնելու պահանջի մասին[4]: Նշված հայցի հիմքում դրվել է նաև այն հանգամանքը, որ ՀՀ արդարադատության նախարարի 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը կայացնելու արդյունքում խախտվել են հայցվորի իրավունքներն ու օրինական շահերը, վատթարացել է հայցվորի իրավական դրությունը:

Տվյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[5],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 77-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին և 2-րդ

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, 22-րդ հոդվածի 3-րդ մասին, 23-րդ հոդվածի 7-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ թեև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 09.03.2023 թվականի թիվ 115-Ա հրամանն ընդունվել է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից, սակայն դրանով ծագած իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, այլ ուղղված է եղել մասնավոր իրավահարաբերության ծագմանը, այն է՝ դրանով նշանակվել է իրավաբանական անձ հանդիսացող «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ 3 անդամներից կազմված ժամանակավոր խորհուրդ, այսինքն՝ նշված որոշմամբ ծագած իրահարաբերությունները հանդիսանում են մասնավոր իրավահարաբերություններ[6],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հիմնադրմանների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 15-րդ հոդվածի 5-րդ մասին, 23-րդ հոդվածի 7-րդ մասին, 35-րդ հոդվածի 15-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 և 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի մայիսի 29-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ այն պատճառաբանությամբ, որ «Վալերի Բրյուսովի

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

անվան պետական համալսարան»-ը հանդիսանում է հիմնադրամ, այսինքն՝ հետապնդում է հանրօգուտ նպատակ և ՀՀ արդարադատության նախարարի՝ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ժամանակավոր խորհուրդ նշանակելու մասին 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանի հիմքում դրվել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը: Այսինքն, հանրային իշխանության սուբյեկտ ՀՀ արդարադատության նախարարն ունեցել է օրենքով սահմանված պարտականություն և վիճարկվող հրամանը կայացնելով, կատարել է օրենքով սահմանված իր իշխանական լիազորությունն իրականացնելու պարտականությունը, այլ ոչ թե հանդես է եկել Հայաստանի Հանրապետության՝ որպես «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի հիմնադրի անունից, որը իր գործունեությունը կարող էր իրականացնել տարբեր պետական մարմինների, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության միջոցով[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-րդ կետում վկայակոչված իրավադրույթների և 9-րդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Կարինե Հարությունյանի կողմից վիճարկվում է պետական մարմնի պաշտոնատար անձի՝ ՀՀ արդարադատության նախարարի վարչական ակտը, ով տվյալ բնագավառում օժտված լինելով հանրային իշխանական լիազորություններով, 2023 թվականի մարտի 9-ին արձակել է թիվ 115-Ա հրամանը՝ նշանակելով «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Այդ հրամանն արձակելիս ՀՀ արդարադատության նախարարն իրացրել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունը, այն է՝ նշանակել է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ, քանի որ հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման պայմաններում երկամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվել: Ընդ որում, այդ հարաբերության ընթացքում ՀՀ արդարադատության նախարարը վերը նշված լիազորությունն իրացրել է հանրային շահի կապակցությամբ, քանի որ այն իրավադրույթը, որով ղեկավարվել է ՀՀ արդարադատության նախարարը, ծառայում է հանրային ընդհանուր շահին, այսինքն՝ պատկանում է հանրային իրավունքին, կարգավորում է

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հանրային իշխանությունը կրողի՝ ՀՀ արդարադատության նախարարի գործողությունները, և իր բնույթով հանրային-իրավական է՝ նկատի ունենալով դրա *հանրօգուտ՝ կրթական և գիտական նպատակին ուղղված լինելու հանգամանքը:*

13. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3465/05/23 գործն ըստ հայցի՝ Կարինե Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի 2023 թվականի մարտի 9-ի հրամանը վերացնելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

14. Վերոգրյալի հիման վրա՝ գտնում եմ, որ Կարինե Հարությունյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3465/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/3465/05/23 գործն ըստ հայցի՝ Կարինե Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարի՝ 2023 թվականի մարտի 9-ի թիվ 115-Ա հրամանը վերացնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ